ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.37/1՝ 20.8քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 12.10.2011թ. հ.2833010 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ալբերտ, Գրիգորի, Սոֆյա Ստեփանյաններին, Ժանետա Առաքելյանին և Ալլա Թերզյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.37/1 հասցեում գտնվող սենյակը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Ալբերտ Ստեփանյանի ընտանիքին։

Ալբերտ Ստեփանյանի ընտանիքը բաղկացած է հինգ անձից՝ ինքը, կինը՝ Ժանետա Առաքելյանը, տղան՝ Գրիգորի Ստեփանյանը, հարսը՝ Ալլա Թերզյանը, դուստրը՝ Սոֆյա Ստեփանյանը, որոնք հաշվառված են Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.37 բնակարանում։

Ալբերտ Ստեփանյանի ընտանիքը բնակվում է Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.37 բնակարանում և միաժամանակ օգտագործում է նաև նույն բնակարանի 20.8քմ մակերեսով 1 սենյակը, որը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 12.10.2011թ. հ.2833010 վկայական)։

Երևանի Շենգավիթի շրջխորհրդի գործկոմի 10.09.1992թ. հ.20 որոշմամբ ընդունվել է շրջխորհրդի գործկոմին առընթեր բնակ. հարցերի հասարակական հանձնաժողովի առաջարկությունը և թույլատրվել է շրջանի բնակ. ֆոնդի վերանորոգման և շահագործման <<Անի>> կոոպերատիվին՝ օրենքով սահմանված կարգով Չեխովի փողոցի հ.34 շենքի հ.37 երեք սենյականոց ընդհանուր կոմունալ հարմարություններով բնակարանի երկու սենյականոցի սեփականատեր քաղ. Ալբերտ Արշավիրի Ստեփանյանին՝ սեփականաշնորհելու մյուս մեկ ազատված սենյակը, սակայն գործընթացը ավարտին չի հասցվել, և տվյալ սենյակի նկատմամբ Ալբերտ Ստեփանյանի սեփականության իրավունքը պետական գրանցում չի ստացել։

Ելնելով վերոգրյալից՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ